# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«08» հոկտեմբերի 2020թ. N ՄՊ/412-202

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N ՄՊ/410-2020 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի N 1586-Ն որոշումը.

*որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի հոկտեմբերի 4-ի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արմավիրի N 8 հիմնական դպրոց», «Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան N 3 հիմնական դպրոց» «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» (Բաղրամյանի տարածաշրջան), «Արաքսի Ջ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց», «Հուշակերտի միջնակարգ դպրոց» և «Ամասիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում ուսումնական գործընթացը հեռավար կազմակերպելու մասին» N ՄՊ/410-2020 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Որոշման 1-ին կետում «հոկտեմբերի 5-7-ը ներառյալ» բառերը փոխարինել «հոկտեմբերի 5-10-ը ներառյալ» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Մարզպետ՝* *Հ.Մաթևոսյան*

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 08.10.2020 10:43:48 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230